ՀԱՄՇԵՆԻ ԵՎ ՀԱՄՇԵՆԱՀԱՅՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ

Հուլիսի 23-ին ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի ու Հայրենադարձության և հիմնավորման «Երկիր» միության նախաձեռնությամբ Երևանի «Կոնգրես» հյուրանոցում տեղի ունեցավ «Համշեն և համշենահայեր. պատմություն և մշակույթ» խորագրով միջազգային գիտաժողովը: Զեկուցումներով հանդես եկան մասնագետներ Հայաստանից, Ռուսաստանից և Թուրքիայից: Գիտաժողովը բավական ընդգրկուն էր. ներկայացված էին Համշենի ու համշենահայության խնդրի տարբեր ասպեկտներին նվիրված զեկուցումներ:

Բացման խոսքով հանդես եկավ Արևելագիտության ինստիտուտի տնօրեն, պրոֆեսոր Ռուբեն Սաֆրաստյանը՝ *իր հանգամանալից և խորը ելույթում կարևորելով համշենահայության խնդրի ուսումնասիրությունը: Ողջույնի խոսքով հանդես եկան ՀՀ մշակույթի փոխնախարար* Գագիկ Գյուրջյանը, *ԳԱԱ փոխնախագահ* Վլադիմիր Բարխուդարյանը, *ԱԳՆ Սփյուռքի կոմիտեի ներկայացուցիչ* Արտակ Զաքարյանը *և «Երկիր» միության նախագահ* Սևակ Արծրունին:

Առաջին նիստը, որը նախագահում էր պրոֆ. Ռ. Սաֆրաստյանը, *սկսվեց ԵՊՀ թուրքագիտության ամբիոնի ավագ դասախոս, «Նորավանք» ԳԿՀ փորձագետ, բ. գ. թ.* Ռուբեն Մելքոնյանի *«Էթնիկ ինքնության խնդիրը Թուրքիայում և համշենցիները» զեկուցումով: Զեկուցման մեջ, մասնավորապես, խոսվեց Թուրքիայում «ինքնության ճգնաժամի» և դրա առաջացրած երևույթների մասին: Անդրադառնալով Թուրքիայի կրոնափոխ համշենցիների խնդրին՝ բանախոսը ներկայացրեց նրանց ներկայիս վիճակի որոշ նրբերանգներ և շեշտեց, որ համշենցիները բռնի իսլամացված հայերի այլ խմբերից առանձնանում են մի շարք յուրահատկություններով, և ըստ այդմ պետք է տարբերակված լինեն նաև խնդրին գիտական շրջանակների մոտեցումները:*

Երկրորդ զեկուցմամբ հանդես եկավ Թուրքիայի Հաջեթեփե համալսարանի դասախոս, դոկտոր Էրհան Էրսոյը, *որը խոսեց համշենցիների արևմտյան խմբի ինքնության տնտեսական, հասարակական և մշակութային բաղադրիչների մասին: Թուրք գիտնականը շեշտեց, որ ժամանակակից աշխարհում առկա մի շարք երևույթների արդյունքում խախտվում են համշենցիների կենցաղավարության կարևոր տարրեր, ինչն էլ լուրջ ազդեցություն է ունենում համշենյան ինքնության վերափոխման մեջ:*

ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի առաջատար գիտաշխատող, «Նորավանք» ԳԿՀ հայագիտական կենտրոնի ղեկավար, պ. գ. դ. Հարություն Մարությանի *ելույթը նվիրված էր Թուրքիայում հայկական ինքնության պահպանման գործում տրավմատիկ հիշողության դերին: Հատկա-*

պես արժեքավոր էին գիտնականի այն եզրահանգումները, որ երբ խոսքը վերաբերում է մարդկանց ինքնության խնդիրներին, ապա պետք է ղեկավարվել գերազանցապես ընդհանրական, առաձգական, ճկուն ձևակերպումներով, այլ ոչ թե ճշգրիտ գիտություններին բնորոշ կանոններով, սահմանումներով, բանաձևերով: Հ. Մարությանի ելույթում, տեսական հիմքին զուգահեռ, ներկայացված էին նաև տարբեր աղբյուրներից վերցված օրինակներ, որոնք էլ ավելի էին հարստացնում զեկուցումը:

Գիտաժողովի երկրորդ նիստում, որը վարում էր Հ. Մարությանը, *հիմնականում ներկայացված էին Համշենի բարբառի և մշակույթի մասին զեկուցումներ, որոնցից հատկապես առանձնացնենք մի քանիսը:*

ԵՊՀ թուրքագիտության ամբիոնի դոցենտ, բ. գ. թ. Լուսինե Սահակյանի *զեկուցումը նվիրված էր Օսմանյան կայսրության լեզվաքաղաքականությանը Համշեն գավառում, ներկայացված էին այդ քաղաքականության հետևանքները: Հեղինակը ներկայացրեց համշենական «Վովա» երաժշտական խմբի երգացանկի մի քանի երգերի գրական հայերեն թարգմանությունը, ինչպես նաև տվեց դրանց խոր և համակողմանի վերլուծությունը:*

Թուրքիան ներկայացնող՝ ծագումով համշենցի Այշենուր Քոլիվարի *ելույթը նվիրված էր, այսպես կոչված, համշեներենի կիրառմանն արևմտյան Համշենում: Զեկուցման ընթացքում բանախոսը ներկայացրեց մի երկխոսության ձայնագրություն, որտեղ հստակ երևում էր, որ հիմնականում թրքախոս արևմտյան խմբի համշենցիների խոսքում պահպանվել են հայերեն որոշ բառեր:*

Համշենի բարբառի բառապաշարային առանձնահատկություններին էր նվիրված ԳԱԱ լեզվի ինստիտուտի գիտաշխատող, բանասիրական գիտությունների թեկնածու Հայկանուշ Մեսրոպյանի *զեկուցումը, որում նա ներկայացրեց տարբեր տարիներին ինստիտուտի կողմից հավաքված բարբառային նյութի քննական վերլուծությունը:*

Հետաքրքիր էր Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի հայ ժողովրդական երաժշտագիտության ամբիոնի դասախոս Կարինե Բրուտյանի *զեկուցումը, որը վերնագրված էր՝ «Դիտարկումներ համշենահայերի երաժշտական ժառանգության մասին»:*

ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի առաջատար գիտաշխատող, պ. գ. թ. Ժենյա Խաչատրյանի *համակողմանի ելույթը վերաբերում էր համշենական պարին՝ որպես ծեսի ներքնիմաստ: Փորձառու գիտնականի՝ համշենական պարին նվիրված հետաքրքիր ու մասնագիտական վերլուծությունը խոր տպավորություն թողեց նաև դահլիճում ներկա համշենցիների վրա:*

Երրորդ նիստը, որը վարում էր ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն, ակադեմիայի թղթակից անդամ, պրոֆեսոր Աշոտ Մելքոնյանը, *սկսվեց ճանաչված մարդաբան, ԵՊՀ թուրքագիտության ամբիոնի դոցենտ, ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի ավագ գիտաշխատող* Նվարդ Քոչարի *«Համշենահայերի տեղը մյուս հայկական էթնոտարածքային խմբերի համակարգում» զեկուցմամբ: Մարդաբանական վերլուծությունների արդյունքում ներկայացված փաստերը՝ համշենցիների մարդաբանական պատկանելության, մասնավորա-*

պես՝ արմենոիդ լինելու մասին, արժանի պատասխան էր որոշ թուրք «գիտնականների» այն պնդումներին, թե համշենցիներն ունեն թյուրքական ծագում:

Երկար տարիներ համշենահայության խնդիրներով զբաղվող բանասեր, «Զայն համշենական» թերթի գլխավոր խմբագիր, «Համշեն» հայրենակցական միության փոխնախագահ Սերգեյ Վարդանյանը *հետաքրքիր զեկուցում ներկայացրեց Հոփայի և Աջարիայի հարակից շրջանների, ինչպես նաև այնտեղից 1944 թ. Միջին Ասիա աքսորված կրոնափոխ համշենահայերի և Ղազախստանում, Ուզբեկստանում, Ղրղզստանում իր կատարած հետազոտությունների մասին:*

ԵՊՀ թուրքագիտության ամբիոնի վարիչ, պ. գ. թ., դոցենտ Ալեքսանդր Սաֆարյանի *զեկուցումը վերնագրված էր՝ «Վ. Գորդլևսկին Օսմանյան կայսրության ազգային-կրոնական փոքրամասնությունների և իսլամացման մասին»: Գիտնականը ներկայացրեց խնդրի ակունքները և ռուսական գիտական դպրոցի վերաբերմունքը դրա նկատմամբ: Ա. Սաֆարյանը միաժամանակ նշեց կրոնափոխ հայության խնդրի ուսումնասիրման կարևորությունը մեզանում:*

Ռուսաստանը ներկայացնող՝ «Համշեն» գիտամշակութային կենտրոնի նախագահ Արտավազդ Թուլումջյանի *զեկուցումը նվիրված էր Ռուսաստանի Դաշնության Կրասնոդարի երկրամասում բնակվող հեմշիլների (հոմշեցիների) ներկա վիճակին: Գիտաժողովում նա առաջ քաշեց նաև ռուսաստանաբնակ համշենցիների հետ կապված մի շարք խնդիրներ, որոնք անհապաղ լուծում են պահանջում:*

Գիտաժողովի վերջին ելույթը նվիրված էր Համշենի հայկական ճարտարապետությանը: Զեկուցման հեղինակը ճարտարապետության դոկտոր Մարգրիթ Հախնազարյանն *էր, սակայն նրա փոխարեն այն ներկայացրեց հայկական ճարտարապետության պատմության մասնագետ Սամվել Կարապետյանը:*

Գիտաժողովն ուղեկցվում էր հետաքրքիր հարց ու պատասխաններով, բանավեճերով:

Կարելի է միանշանակ պնդել, որ գիտաժողովը հաջողված էր և, միևնույն ժամանակ, խթան՝ մեզանում համշենահայության խնդրի գիտական ուսումնասիրության ուղղությամբ: Այն մեկ անգամ ևս ապացուցեց, որ Հայաստանում խնդրին և նրա առանձին նրբերանգներին խորագիտակ մասնագետներ կան:

ՌՈՒԲԵՆ ՄԵԼՔՈՆՅԱՆ